



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄԱՆ ԹԵՍԻ  
WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՔՐԵՍԵՆԹԱ ՀԱՍՎՅՆՔԻ ԿԱՉՄՈՒԹԵԱՆ Ա. ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՍԱՏՈՒՅՈՒԱԾ Ս.  
ՊԱՏԱՐԱԳԻՆ ԵՒ ԴՊՐԱՑ ՁԵՌԱՆԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՒՐԱՐԻ ՏՈՒՅՈՒԹԵԱՆ ՍՈՒԹՈՎ՝

**Հաւատքով ծառայեցէք Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ, Եւ Քրիստոսի քաղցր  
լուծը խորհրդանշող՝ մաքուր Ս. ուրարևեր ստանալով՝ խոնարհեցուցէք  
ձեր անձերը Աստուծոյ դիմաց,  
որպեսզի Տերն ալ ձեզ բարձրացնէ**

**Պատգամեց Առաջնորդ Սրբազն Հայրը**

Համայնքները Աստուծոյ շնորհքով եւ Ս. Յոգիին օգործեամբ կը կազմուին,  
Քրիստոսի անունով նոյն հաւատքը ունեցողներու համախմբումը վերածելով  
Եկեղեցի՝ Քրիստոսի հարսին: Ահա այս շնորհքին արժանացան Քրեսենթա Յովիտի  
հաւատացեալները, շուրջ տարի մը առաջ, երբ շրջանի հայորդիները,  
հովանաւորուած Առաջնորդ Սրբազնին՝ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք.  
Մարտիրոսեանի կողմէ եւ վայելելով նեցուկը Ազգային Առաջնորդարանի Խառն  
ժողովին, քով քովի Եկան եւ Երազը իրականութեան վերածելով համայնք  
ստեղծեցին, ի փառաբանութիւն Ամենասուրբ Երրորդութեան, ի կենդանութիւն  
համայնքին հոգեւոր կեանքին եւ ի շինութիւն սրբոյ Եկեղեցւոյ:

Կիրակի, 11 Յունիս 2006-ի կեսօրին, Քրեսենթա համայնքի կազմութեան  
առաջին տարեդարձին առիթով, սուրբ եւ անմահ պատարագ մատոյց Թեմիս  
Առաջնորդ Սրբազն Հայրը, իր կողքին Ս. Սեղանին սպասարկող ունենալով Յոգ:  
Պարթեւ Վրդ. Կիւլիւմեանը եւ շրջանին հոգեւոր մատակարար Արժ. Արտակ Զիսյ.  
Տեմիրճեանը: «Հրաշափառ» շարականի Երգեցողութեամբ թափորը մուտք գործեց  
Եկեղեցի, ուր հաւատացեալներու հոծ բազմութիւն մը ներկայ էր:

Ս. Պատարագի ընթացքին, նախքան քարոզը, կատարուեցաւ դպրաց  
ձեռնադրութիւն եւ ուրարի տուչութիւն ութ թեկնածուներու, որոնք կը ծառայեն այս  
համայնքին, ինչպէս նաեւ Կլինտի Ս. Աստուածածին եւ Յովիտի Ս. Նահատակաց  
Եկեղեցիներուն մէջ: Դպրաց կարգի չորս աստիճանները եւ ուրար կրելու իրաւունք  
ստացան հետեւեալ ութ թեկնածուները.- Տիգրան Տէր Սարգիսեան, Վարուժ  
Պետիկեան, Արամ Պեքարեան, Յարութ Օտապաշեան, Սեղրակ Գարատօւեան,  
Վահե Գասապեան, Րաֆֆի Տեմիրճեան եւ Րաֆֆի Կարապետեան:

Ձեռնադրութեան արարողութիւնը կատարուեցաւ աշխարհաբարով, որպեսզի  
ներկաները հասկնան ու հաղորդ ըլլան կարդացուած աղօթքներուն:  
Խարտաւիլակութիւնը կատարեց Յոգ: S. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան: Թեկնածուները  
Ս. Խորանին վրայ, Առաջնորդ Սրբազն Յօր առջեւ ծունկի Եկան եւ ստացան դպրաց

չորս աստիճանները՝ դօնապանութիւն, ընթերցողութիւն, երդմնեցուցչութիւն եւ շահընկալութիւն, ինչպէս նաեւ աւարտին՝ ուրար կրելու իրաւունք:

Առաջնորդ Սրբազնը իր քարոզին մէջ անդրադարձաւ, որ թէեւ ծունկի գալը ձեռնադրութեան ընթացքին դժուար է եւ միաժամանակ ցաւատանչ, սակայն Աստուծոյ ծառայելու համար, խոնարի կարգին մինչեւ բարձրագոյն կարգ ստանալու համար, ծունկի պէտք է գալ, որովհետեւ ան որ կ'ուզէ Աստուծոյ ծառայել՝ նախ պէտք է խոնարիի Անոր առջեւ: Սրբազնը շեշտեց, թէ Աստուծոյ շնորհըն ու Յոգին է որ կ'իմաստնացնեւ եւ կ'առաջնորդէ մարդս: Եւ Աստուծոյ առաջնորդութեամբ է, ահա, որ ութ անձերը արժանի եղան համապատասխան դպրաց կարգ ստանալու: «Կրթուն կերպով սերտեցէ՛ք Աստուծոյ օրէնքները, սիրեցէ՛ք Անոր պատուիրանները եւ ձեր կեանքին մէջ գործադրեցէք զանոնք: Աստուծմէ՛ սորվեցէք եւ ապա ձեր սորվածը ծառայեցուցէք ժողովուրդի կեանքին: Աստուծոյ խօսքը ձեր մէջէն ծառագայթեցուցէք եւ ծգեցէք որ իր Յոգին առաջնորդէ ձեզ: Յիմա որ Քրիստոսի քաղցր լուծը խորհրդանշող մաքուր ուրարները ստացաք, խոնարիեցուցէ՛ք դուք ձեզ, ձեր անձերը Աստուծոյ դիմաց, որպէսզի Աստուծած ալ ձեզ բարձրացնեւ: Մեծ սիրով ու հաւատքով ծառայեցէք Յայց. Առաքելական Եկեղեցին ու հայ ժողովուրդին», ըսաւ Սրբազն Յայրը եւ յիշեցուց նաեւ, որ այս Կիրակի, Յոգեգալուստեն ետք առաջին Կիրակին է, եւ միակ Կիրակին՝ որ մարգարեի մը անունը կը կրէ՝ Եղիա Մարգարեի Կիրակի: Եղիա մարգարեն խիզախ քարոզիչն էր Աստուծոյ խօսքին, որ իր ծառայական կեանքին մէջ բազմաթիւ խոչընդուներու եւ դժուարութեանց հանդիպեցաւ, սակայն երբեք չընկրկեցաւ, այլ խիզախօրեն քարոզեց ու ապա երկինք յափշտակուեցաւ: «Եղիայի օրինակո՞վ ապրեցէք, հաւատքո՞վ լիցքաւորուեցէք, որովհետեւ հաւատքը մեզ Աստուծոյ սիրով կ'ողորդէ, մեզ կը կերպարանափոխէ, կը պայծառակերպէ: Այս հաւատքով ապրեցէք դուք բոլորդ, եւ եթէ այսօր դպրաց ձեռնադրութիւն եւ ուրարի տուչութիւն կատարեցինք, գալիք ամիսներուն ալ տակաւին պիտի կատարենք նոր ձեռնադրութիւններ, սակայն ապագային դուք պիտի ունենաք ձեր սեփական Եկեղեցին ու նոյն հաւատքով զայն պիտի օծենք», պատգամեց Առաջնորդ Սրբազնը: Ապա իր խօսքը աղօթքով փակեց ըսելով. «Զու Յոգիդ դոկէ եւ մեր մէջ հանգէցուր, ՏԵ՛ր, որպէսզի աւելի՝ իմաստնանանք, աւելի պայծառանան մեր միտքերը, խաղաղին մեր կիրքերը, լուսազարդուին մեր սիրտերը, որպէսզի միայն քեզի ծառայենք, Զու փառքը պատմենք բոլորին առջեւ, յալիտեանս յալիտենից. ամէն»:

Քարոզէն ետք, յիշեալ թեկնածուները իրենք ստանձնեցին սուրբ խորանի ծառայութիւնը եւ ապա հաղորդուեցան Յիսուս Քրիստոսի Ս. Մարմինով ու Վրեամբ: Պատարագի աւարտին, Ներկասները միաբերան ու մեծ խանդով երգեցին «Կիլիկիա»ն, եւ ապա «Ուրախ լեռ» շարականի Երգեցողութեամբ Առաջնորդ Սրբազն Յայրն ու թափօրը դուրս եկան Եկեղեցին:

Եկեղեցւոյ ծիսական խորհուրդին կողմէ Ներկայ բոլոր հաւատացեալներուն հրամցուեցաւ սիրոյ ճաշ, զոր Սրբազն Յայրը օրինելէ ետք՝ բոլորն ալ համատեղ ճաշեցին, եւ ապա, գոհունակ սրտով վերադարձան իրենց տուները:

ՊԱԿ

**HOLY MASS, ORDINATION OF ACOLYTES, AND THE GRANTING OF STOLES, ON THE FIRST ANNIVERSARY OF THE LA CRESCENTA PARISH**

**SERVE THE ARMENIAN APOSTOLIC CHURCH WITH FAITH, AND BY  
RECEIVING THE STOLES REPRESENTING THE YOKE OF JESUS  
HUMBLE YOURSELVES IN FRONT OF GOD,  
SO THAT HE MAY EXALT YOU**

**Declared the Prelate**

One year ago, with the guidance of His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the support of the Religious and Executive Councils, the Armenian faithful of the Crescenta Valley made their dream of having their own parish community a reality.

On the afternoon of Sunday, June 11, 2006, and on the first anniversary of the establishment of the Crescenta Valley parish, the Prelate conducted Holy Mass at the parish church, assisted at the altar by Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Fr. Ardag Demirjian. They entered the church in a procession accompanied by the "Hrashapar" hymn.

During the Mass and prior to the sermon, ordination of acolytes took place and the granting of stoles to eight candidates who serve the local parish, and also St. Mary's Church of Glendale and Holy Martyrs Church of Encino. Those granted the privilege of wearing a stole were Dikran Der Sarkissian, Varouj Bedigian, Aram Bekarian, Harout Odabashian, Setrak Karadolian, Vahe Kassabian, Raffi Demirjian, and Raffi Garabedian.

The ordination ceremony was conducted in modern Armenian so that those in attendance would be able to fully comprehend the prayers. The candidates knelt before the Prelate on the altar and received the four ranks of acolytes; porter, reader, confessor, and illuminator, and the privilege of wearing a stole at the conclusion.

In his sermon, the Prelate recognized that although kneeling during an ordination can be difficult, it is necessary, because he who wants to serve God must first humble himself to God. He stressed that it is God's Grace and Spirit that gives us wisdom and guides us and it is with the Lord's guidance that these eight individuals became worthy of the rank of acolyte. "Study the Lord's commandments attentively and apply them to your daily lives. Learn from God and use what you learn to serve the community. Let God's Word radiate from within you and let the Holy Spirit lead you. Now that you have received the stoles that represent the yoke of Jesus, humble yourselves in front of God so that He may exalt you. Serve the Armenian Apostolic Church with love and faith", said the Prelate, reminding the faithful that it was the first Sunday after Pentecost and the only one that bears the name of a prophet, the Prophet Elijah. "Live with faith in the example of Elijah, because faith transforms and enlightens us. Just as today we conducted the ordination of acolytes and the granting of stoles, in the future there will be further ordinations and you will soon have your own church, which we will anoint with this same faith", said the Prelate thus concluding his sermon.

Following the sermon, the eight candidates received Holy Communion. At the conclusion of Holy Mass, the faithful sang "Gligia" and "Oorakh Ler" along with the Prelate and the procession.

Following church services, the faithful enjoyed a reception organized by the parish council.